



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ  
 ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ  
 ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
 ԿԱՏԱՐՈՂ Ա. ՄԱԶՄԱՆՅԱՆ  
 « 15 » 06 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0104-21

Ձեռնարկողը՝

«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ  
 Լոռու մարզ, գյուղ Թեղուտ

Գործունեությունը՝ *Սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոնների պահման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկարգություն*  
 Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0104-21  
<15> 06 2021թ.

**Սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող  
թափոնների պահման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվություն**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝	«ԹԵՂՈՍ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Շնող համայնք

«Թեղուտ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իր սեփական տարածքում, որը գնտվում է Լոռու մարզի Շնող համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում նախատեսում է կազմակերպել արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամասի կառուցում և շահագործում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 6-րդ կետի ա. ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

**Նկարագրական մաս.**

«Թեղուտ» ՓԲ ընկերության պլանավորվող նախագծի հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում, Շնող համայնքի տարածքում, Ալավերդի քաղաքից 29 կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ-արևմուտք:

Թեղուտ ՓԲԸ-ի մոտակա բնակելի տարածքներն են Թեղուտ և Շնող գյուղերը, որոնք գտնվում են հանքավայրից 4 և 6 կմ հեռավորությունների վրա:

Հանքավայրը գտնվում է Վիրահայոց լեռների շղթայում, նիշերի բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 700-1450մ: Ամենաբարձր գագաթը Լավվար սարն է, ծովի մակարդակից 2543.5մ:

Տարածքի ռելիեֆը բարդ է, կտրատված չորս կիրճով, որոնցով հոսող գետակները (Շնողը, Կռունկը, Պակասաջուրը, Դուքանաձորը) ունեն մշտական ջրիոսք:

Հանքավայրի գտնվելու վայրում բացակայում են այլ արդյունաբերական ձեռնարկություններ, գործող շինարարական հզորություններ, շինարդյունաբերական բազաներ:

Նախատեսվող արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամասի (ԱԹՏՏ) կառուցման համար լրացուցիչ նոր տարածքներ չեն խախտվելու: Տեղամասը ներգրավված է լինելու ընկերության լցակայանների տեղադրման ընդհանուր տարածքի մեջ:

Պահեստարանների կառուցման համար նախատեսվող հողի նպատակային նշանակությունը՝ արտադրական է, իսկ գործառնականը՝ ընդերքօգտագործման, ինչը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը:

ԱԹՏՏ-ի ստեղծման արդյունքում Թեղուտ ՓԲԸ-ն հնարավորություն է ունենալու լիարժեք ներդնել Թափոնների կառավարման պլանը, որի արդյունքում ձևավորվելու է աստիճանական կառավարում և ընկերությունը ունենալու է՝

- Թափոնների ծավալների կրճատում և ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարելավում:
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցում:
- Ֆինանսական եկամտաբերություն և արդյունավետություն:
- Ծախսերի կրճատում:
- Աշխատակիցների համար անվտանգ աշխատանքային միջավայրի ստեղծում և հասարակության առողջության վրա ազդեցության նվազում:
- Բարելավվելու է իրազեկությունը:

Թեղուտ ՓԲԸ-ում, ըստ սահմանված կարգի, առկա են 18 անձնագրավորված թափոններ.

1. բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան,
2. բանեցված կապարե կուտակիչներ և խոտան,
3. բանեցված կոմպրեսորային յուղեր,
4. բանեցված տրանսմիսսիոն յուղեր,
5. հալոգեն չպարունակող՝ բանեցված հիդրավլիկ յուղեր,
6. իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ,
7. բանեցված դիզելային յուղեր,
8. բանեցված շարժիչների յուղերի թափոններ,
9. գործածված միանվագ ներարկիչներ,
10. բանեցված օդաճնշիչ դողեր,
11. չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ,
12. կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ,
13. յուղոտված լաթեր,
14. եռակցման խարամ,
15. բժշկական թափոններ,
16. կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդների թափոններ,
17. յուղերով աղտոտված մաքրման նյութեր,
18. տարատեսակ փայտի փոշի և տաշեղ:

Ընկերությունում առաջացող արտադրական թափոնների տեսակներն, ըստ իրենց վտագավորության դասերի ներկայացվում են՝

- I դաս՝ չափազանց վտանգավոր թափոններ,
- II դաս՝ վտանգավոր թափոններ,
- III դաս՝ չափավոր վտանգավոր,
- IV դաս՝ քիչ վտանգավոր թափոններ,
- V դաս՝ դատարկ ապարներ/լցակայաններ/,
- IV դաս՝ պոչամբար: